ՍԻՐՏ ԱՍՏԾՈ ՍՐՏԻ ՊԵՍ

ՍԱՂ. 78:70-72

I. ԴԱՎԻԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ

Ի՞նչու Աստված ընտրեց Դավիթին: կ՞արող եք մի դեպք հիշել Դավիթի կյանքից:

A. Այն օրերին Իսրայէլի մէջ թագաւոր չկար

Դատ. 21:25 - 25 Այն օրերը Իսրայէլի մէջ թագաւոր չկար. ամեն մարդ իր աչքի հաճելի եղածն էր անում:

Սամվելը Իսրայելի վերջին դատավորներ: Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ Սամվելը Աստծո մարդ էր, բայց ուներ անաստված որդինդր: Քանի որ Իսրայելում ոչ մի թագավոր չկար եւ Սամվելի ընտանիքի անդամներից ոչ ոք չէր կարող առաջնորդել ազգին, ժողովուրդը խնդրեց մի այլ թագավորի: (տես 1 Սամուել 8)

1 Թագ. 8:3 - 3 Եւ նորա որդիները չգնացին նորա ճանապարհների մէջ, այլ շահասիրության ետեւից ընկան եւ կաշառք էին առնում, եւ իրաւունքը ծռում էին:

B. Սավուղ, թագավոր ժողովուրդի սրտի պես

Սավուղը ժողովրդի սրտի պես թագավոր էր: Նա ավելի շատ մտահոգված էր այն բանի համար թե ինչ է ժողովուրդը մտածում իր մասին, քան ինչ է Աստված մտածում... Ակնհայտ է, որ նման առաջնորդը պատրաստ չի մարդկանց առաջնորդել Աստվածո ձևով:

1 Թագ. 9:2 - 2 Եւ նա մի որդի ունէր, անունը Սաւուղ. Սա մի տղամարդ էր եւ գեղեցիկ, եւ Իսրայէլի որդիների մէջ նորանից գեղեցիկ մարդ չկար, ուսից վեր բարձր էր նա բոլոր ժողովրդից:

II. ԴԱՎԻԹԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1 Թագ. 16:6-7,11-13 - 6 Երբ նրանք մտնում էին, նա Եղիաբին տեսնելով՝ ասաց. «Իրօք, Տիրոջ օծեալն իր առջև է: 7 Տէրը, սակայն, ասաց Սամուէլին. «Նրա տեսքին մի՛ նայիր և ոչ էլ հասակի բարձրութեանը, քանզի ես նրան չեմ ընտրել: Աստուած այնպէս չի նկատում, ինչպէս նկատում են մարդիկ. մարդիկ երեսին են նայում, իսկ Աստուած՝ սրտին»:

11 Տէրը դրանցից որևէ մէկին չի ընտրել»: Սամուէլը Հեսսէին ասաց. «Այսքա՞ն են քո որդիները»: Հեսսէն ասաց. «Մի փոքրիկ տղա էլ ունեմ, որ ոչխար է արածեցնում»: Սամվելն ասաց Հեսսէին. «Մարդ ուղարկի՛ր ու բերել տո՛ւր նրան, քանզի մենք սեղան չենք նստի, մինչև նա այստեղ չգա 12 Եւ նա մարդ ուղարկեց, և նորան բերել տուավ. Եւ նա կարմիր էր և գեղեցիկ աչքերով, և դէմքով էլ գեղեցիկ: Այն ժամանակ Տէրն ասեց. Վեր կաց օծիր դորան, որովհետև սա է: 13 Եւ Սամվելը յուղի եղջյուրն առավ, և օծեց նորան իր եղբայրների մէջ. Եւ այն օրից հետո Տիրոջ Հոգին եկավ Դավիթի վրա. Եւ Սամվելը վեր կացավ գնաց Ռամա:

C. Աստծո չափանիշները Թագավորներ Ընտրելու:

*1 Կոր. 1:28 - Եւ աշխարհի **անտոհմներին** եւ **անարգուածներին** Աստուած ընտրեց՝ եւ **ոչինչներին**, որ մի բան կարծողներին ոչնչացնի: Ի՞նչու*

2 Կոր. 4:7 - Բայց այս գանձն ունենք հողի անօթներում. որ զօրության գերազանցությունը Աստուծունը լինի, եւ ոչ թէ մեզանից:

D. Դավիթը, թագավոր ժողովուրդի սրտի պես

*1 Թագ. 13:14 - 14 Տէրն իր համար իր սրտի համեմատ մի **մարդ է ուզում**, որին իշխան նշանակի իր իր ժողովրդի վրա.*

***Գործ. 13:22 -** 22 Եւ նորան փոխելով, Դավիթին նորանց համար թագավոր կանգնեցրեց, որ նորա համար էլ վկայություն տվեց եւ ասեց. Հեսսէի որդի Դավիթին գտա **իմ սրտի պէս** մարդ, որը պիտի կատարի իմ **ամբողջ կամքը**:*

What does it mean to be a man or woman after God's own heart? Chuck Swindoll describes it as: 'a person whose life is in harmony with the Lord.'

ԲԱՆԱԼԻ ԲԱՌ

"Heart" (Hebrew lebab/leb, Gk. kardia

1. «Սիրտ» - Աստվածաշնչում այս բառը հանդիպում ենք ավելի քան հազար անգամ, և Սուրբ Գրքում այն համարվում է ամենատարածված մարդաբանական տերմինը: Սիրտը հանդիսանում է մարդու ֆիզիկական և զգացմունքային -մտավոր-բարոյական գործունեության կենտրոնը; երբեմն այն օգտագործվում է փոխաբերական իմաստով ցանկացած անհասանելի բանի համար:

Ի՞նչ տեսավ Աստված Դավթի սրտում: Սաղմոս 78-ը սովորեցնում է մեզ որ Աստված տեսավ Դավթի սրտում երեք առանձնահատուկ հատկություններ, թագավոր լինելու համար: Իմ աղոթքն է որ Աստված յուրաքանչյուրիս օգնի որպիսզի ունենանք այդ երեք հատկությունները:

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

Սաղ. 78:70-72 - 70 Եւ իր **ծառա** Դավիթին ընտրեց, եւ առաւ նորան ոչխարների
փարախից։ 71 Ծիծ տվող **ոչխարների մօտից** տարաւ նորան, որ իր Հակոբ
ժողովուրդը եւ իր Իսրայէլ ժառանգությունը կառավարի։ 72 Եւ նա արածեցնում
էր նորանց **սուրբ սրտով**. եւ իմաստուն ձեռքով առաջնորդում էր նորանց։

1. ԾԱՌԱՅՈՂԻ ՍԻՐՏ – SERVANT'S HEART

70 Եւ իր ծառա Դավիթին ընտրեց.

Մատ. 23:11 - Եւ ձեզանից մեծը թող ձեր ծառան լինի։

- **Աստված ընտրում է այն մարդկանց ովքեր ունեն ծառայող սիրտ:**

Փիլիպ. 2:3-8 - 3 Ոչ մի բան չլինի գրգռումով, եւ ոչ էլ սնապարծությունով. այլ
խոնարհությունով թող մէկը մյուսին իր անձից ավելի լավ համարի։ 4 Միայն ձեր
անձերի բաներին մտիկ չտաք, այլ ամեն մէկն իր ընկերի բաներին էլ։ 5 Ձեր
ամեն մէկը թող այն մտածէ, որ էլ Քրիստոս Հիսուսում էր. 6 Որ Աստուծո
կերպարանքում լինելով, հափշտակություն չհամարեց Աստուծուն հավասար լինել։
7 Այլ իր անձն ունայնացրեց, եւ **ծառայի կերպարանք առնելով՝** մարդկանց
նման լինելով եւ կերպարանքով մարդի պէս գտնուելով. 8 Իրեն խոնարհեցրեց, եւ
հնազանդ եղավ մինչեւ ի մահ՝ եւ այն էլ **խաչի մահ:**

Christ's greatest act of servanthood was not His incarnation or even the washing the disciples' feet. His greatest act of servanthood was His willingness to die on the cross for our sins.

2. ՀՈՎՎԻ ՍԻՐՏ – A SHEPHERD'S HEART

70 Եւ իր ծառա Դավիթին ընտրեց, եւ առաւ նորան ոչխարների փարախից։ 71 Ծիծ
տվող ոչխարների մօտից տարաւ նորան, որ իր Հակոբ ժողովուրդը եւ իր Իսրայէլ
ժառանգությունը կառավարի։

- **Դավիթը ոչ միայն ծառայի սիրտ ուներ, այլ նաև հովիվի սիրտ:**

  Ի՞նչ է նշանակում ունենալ հովվի սիրտ:

  Հովիվի սիրտ ունենալ նշանակում է որ հոգ է տանել ուրիշների մասին։

- **Հիսուսը Հովվի սիրտ ուներ**

  Հով. 10:11 - 11 Ես եմ բարի հովիվը. բարի հովիվն իր անձը դնում է
  ոչխարների համար։

1 Թագ. 17:34-36 - 34 Եւ Դավիթն ասեց Սավուղին. Ծառադ իր հօր ոչխարները արածեցնում էր, եւ առյուծը կամ արջը գալիս էր, եւ հօտերից ոչխար էր տանում: 35 Ես նորա ետեւից գնում էի՝ նորան զարկում եւ նորա բերանից ազատում էի. Եւ երբոր նա վեր էր կենում ինձ վրա, մօրուքից բռնում էի, զարկում եւ մեռցնում: 36 Ծառադ առյուծ էլ է մեռցրել՝ արջ էլ. Եւ այս անթլփատ Փղշտացին էլ թող նորանց մէկի պէս լինի, որովհետեւ կենդանի Աստուծո զօրքերին նախատեց:

3. ԱՆԿԵՂԾ ՍԻՐՏ – A SHEPHERD'S HEART

72 Եւ նա արածեցնում էր նորանց սուրբ սրտով. եւ իմաստուն ձեռքով առաջնորդում էր նորանց: (And David shepherded them with integrity of heart, true heart, upright heart, devoted heart, perfection of his heart):

- **Դավիթը ոչ միայն ուներ ծառայի սիրտ, հովիվի սիրտ, այլ նաև ազնիվ սիրտ:**

Ի՞նչ է անկեղծությունը: Պարզ սահմանում. ամբողջական, կատարյալ, ազնիվ, ուղիղ, բարոյապես ողջամիտ և մաքուր:

Անկեղծությունը ձևավորում է արժանահավատ վերաբերմունք, որի հիման վրա կառուցվում է վստահությունը: Շարունակական վստահությունը հենվում է անկեղծության վրա, որն, իր հերթին, հենվում է արժանահավատության վրա:

Ծնն. 20:6 - Աստուած երազի մէջ ասաց նրան. Գիտեմ, որ դու մաքուր սրտով ես արել այդ, դրա համար էլ ես խնայեցի քեզ. Նաեւ ես քեզ ինձ դէմ մեղք գործելուց ետ պահեցի, Այդ պատճառով էլ թույլ չտվեցի որ նորան մօտենաս:

Անկեղծությունը նման է էլեկտրականությանը. այն սահմանելի, բայց անտեսանելի ուժ է:

Իսկ ինչպե՞ս է անկեղծությունն արտահայտվում քրիստոնյայի կյանքում:

«Այն, ինչը մեր ետևում է, և այն, ինչը մեր առջևում է, փոքր բաներ են՝ համեմատած այն ամենի հետ, ինչը մեր ներսում է»: *– Մեջբերում Ռալֆ Ուոլդո Էմերսոնից.*

Ամփոփում:

Այն երեվում է մեր գործերի, քայլերի, վարքի, վկայության և ապրելակերպի միջոցով: